


Հին աշխարհի պառլամենտարիզմը. Աթենք և Հռոմ

Մանուկյան Մարտին Ա.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիտորինգի պատասխանատու,
իրավաբանական գիտությունների թեկնածու, իրավագիտության ամբիոնի դասախոս,
Երևանի «Գլաձոր» համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0002-3636-6701>
martin_manukyan_1955@mail.ru

ՀՏԳ՝ 342; EDN: GZNSWL

DOI: 10.58587/18292437-2025.3-51

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ արքնոս, չրսիարյուրի խորհուրդ, հինգհարյուրի խորհուրդ, օստրակիզմ, ֆիլեր, օբոլ, դրահմա, արեոպագոս, հելիեա, արիստոկրատիա, դեմոս, ստրատեգների խորհուրդ

Парлиментаризм античного мира: Афины и Рим

Манукян Мартин А.

Ответственный за мониторинг работы Аппарата Народного Защитника Палаты адвокатов РА,
кандидат юридических наук, преподаватель кафедры юриспруденции,
Ереванский университет "Гладзор" (Ереван, РА)

Аннотация. Античный мир оставил человечеству не только блестящие литературные и художественные образцы, но и такие политические институты, которые стали общечеловеческим наследием.

Описанное Гомером народное собрание в Афинах сохранялось на протяжении нескольких столетий. Однако со временем рядом с ним появился совет из четырехсот наиболее состоятельных граждан, а также знатный ареопаг – высший орган принятия решений. Однако разрастающееся гражданское общество стало вписываться в традиционные структуры наследственной и военной демократии. Кроме того, частые войны с соседями, пытавшимися захватить «райские» земли ахейцев, сформировали культ мужества, а общинные традиции основывались на принципе гражданской чести и равных возможностей для всех свободных граждан. Без учета этого фактора трудно понять «демократический взрыв», произошедший в Афинах.

Ключевые слова и словосочетания: архонт, совет четырехсот, совет пятисот, остракизм, филер, обол, драхма, ареопаг, гелиэя, аристократия, демос, совет стратегов

Parliamentarism of the Ancient World: Athens and Rome

Manukyan Martin A.

Responsible for monitoring the work of the Office of the Public Defender of the Chamber of Advocates of the Republic of Armenia,
Candidate of legal sciences, Lecturer of the Department of Jurisprudence of,
Yerevan University "Gladzor" (Yerevan, RA)

Abstract. The popular assembly described by Homer in Athens lasted for several centuries. However, over time, a council of four hundred of the wealthiest citizens appeared next to it, as well as the noble areopagus - the highest decision-making body. However, the expanding civil society began to fit into the traditional structures of hereditary and military democracy. In addition, frequent wars with neighbors who tried to seize the "paradise" lands of the Achaeans formed a cult of courage, and communal traditions were based on the principle of civic honor and equal opportunities for all free citizens. Without taking this factor into account, it is difficult to understand the "democratic explosion" that occurred in Athens.

Keywords and phrases: archon, council of four hundred, council of five hundred, ostracism, file, obol, drachma, areopagus, heliaia, aristocracy, demos, council of strategists

Աթենական ժողովրդավարության ծաղկումը համընկնում է մ.թ.ա. V դարին, մասնավորապես Պերիկլեսի կառավարման տարիներին (մ.թ.ա. 443-429 թթ.), ինչը, սակայն, նախապատրաստվել էր Սոլոնի և Կլիսթենեսի բարեփոխումներով:

Կողմիղների թագավորական տոհմից սերող Սոլոնը, չնայած մեծ հարստություն չուներ,

զբաղվում էր առևտրով և, ժամանակակից լեզվով ասած, մոտ էր քաղաքային միջին խավերին: Նրա ազնվական ծագումը նրան ապահովել էր անդամակցություն արեոպագոսում. Սոլոնը եղել է արքնոս: Մ.թ.ա. 594 թ. նա նշանակվել է առաջին արքնոս և միջնորդ՝ ազնվականների ու ժողովրդի միջև, սոցիալական ճգնաժամի սրման և ներքին անկարգությունների պայմաններում

(Արիստոտելը գրել է. «Ժողովուրդը ապստամբել էր ազնվականների դեմ»), ինչը սպառնում էր քաղաքացիական պատերազմով: Սոլոնը հանդես եկավ մի շարք բարեփոխումների նախաձեռնությամբ: *Պլուտարքոսը գրում է. «Սոլոնը չգոհացրեց ոչ մի կողմին՝ հայրուստներին նա զայրացրեց՝ պարտքային պարտավորությունները վերացնելու պատճառով, իսկ աղքատներին՝ հիսալթախեցրեց, քանի որ հողերի վերաբաժանում չիրականացրեց, ինչին նրանք հույս էին կապում...»* [7, էջ 112]:

Սոլոնը չեղյալ հայտարարեց գյուղացիների բոլոր պարտքերը: Իրենց պարքերի դիմաց պարտատերերի մոտ հարկադրաբար աշխատողներն ազատվեցին, պարտքի դիմաց պետության սահմաններից դուրս ստրկության վաճառվածները վերադարձան հայրենիք, փոխանակվեցին պատերազմական գերիներ: Սոլոնը հրատարակեց օրենք, որով սահմանափակվեց հողատիրությունը (սահմանվեց հողի առավելագույն չափը): Նա, միաժամանակ հնարավորություն տվեց հողն օտարել կտակի միջոցով: Ի հակադրություն պետական մյուս մարմինների, Սոլոնը ստեղծեց երդվյալների դատարանը, որը հետագայում ձեռք բերեց քաղաքական մեծ նշանակություն: Սոլոնը ներդրեց ունեցվածքի ցենզ՝ ազատ քաղաքացիներին քաղաքական իրավունքներ ու պարտավորություններ վերապահելու պայմանով, ինչը բոլորին չէ, որ թույլ չէր տալիս ընդգրկվել իշխանական համակարգում:

Թույլ տալով աղքատներին մասնակցել միայն ժողովրդական ժողովին և երդվյալ ատենակալների դատարանին՝ Սոլոնը ընդլայնում էր ժողովրդավարության սոցիալական հիմքը, սակայն սահմանափակում էր ունևորների իրավունքները՝ նրանց միայն վերապահելով չորսհարյուրի խորհրդում պաշտոններ զբաղեցնելու ու արեոպագոսում ընդգրկվելու իրավունքը: Իր բարեփոխումների հակասականությունը գիտակցելով՝ Սոլոնը արդարանում էր.

«Այո՛, Ժողովրդին տվեցի պատիվ՝ ըստ կարիքի նրա,

Չասհամանախակեցի իրավունքը, ավելին էլ չտվի:

Նաև հիշեցի ուժեղներին ու հարստությամբ հայրենի,

Որպեսզի չտուժեն նրանք ու չհայածվեն...»

Քաղաքական մասնակցության բարոյական արդարացման տեսանկյունից չափազանց հետաքրքիր է Պլուտարքոսի դիտարկումը.

«Սոլոնի մնացած օրենքներից հատկապես հատկանշական և զարմանալի է այն օրենքը, որը պահանջում է քաղաքացիական իրավունքներից զրկել նրան, ով չի հարում որևէ կուսակցության: Մակայն, Սոլոնը, ըստ ամենայնի, ցանկանում է, որ քաղաքացին անտարբեր ու անմասն չմտնենս ընդհանուր գործին՝ իր ունեցվածքն սպառնալով»

վագրելով վտանգից ու հպարտանալով, թե ինքը չի մասնակցել հայրենիքի վշտերին. ընդհակառակը, նա ցանկանում է, որ ամեն քաղաքացի անմիջապես կանգնի այն կուսակցության կողքը, որը պաշտպանում է բարի, արդար գործը, կիսի նրա հետ վտանգները, օգնի նրան, այլ ոչ թե սպասի առանց որևէ վտանգի, թե՛ ով կհաղթի» [1, էջ 49]:

Սոլոնի օրենքները, ինչպես օրինակ՝ հարսնացուի պարտադիր դրամաօժիտ բերելու վերացման մասին օրենքը (քանի որ ամուսնությունը, ըստ նրա օրենքներից մեկի, անհամատեղելի է նյութական հաշվարկի հետ), մահացածների մասին վատ խոսելու և հայիոյելու արգելքը տաճարներում, դատական և պետական շենքերում հանդիսությունների ժամանակ, այն երեխաներին պարտականություններից ազատումը, ովքեր պարտավոր չեն խնամել հորը, եթե վերջինս ժամանակին չի հոգացել նրանց որևէ արհեստի ուսուցման մասին և այլն, պայմանավորված էին քաղաքացիների ընդհանուր բարոյական ոգին վերականգնելու ձգտմամբ:

Սոլոնի բարեփոխումներով ամրապնդվեցին աթենական պետականության ժողովրդավարական հիմքերը, իսկ Կլիսթենեսի իշխանությունը բացեց աթենական ժողովրդավարության վերելքի և նրա ինստիտուցիոնալացման շրջանը:

Կլիսթենեսի օրոք վերացվում է քաղաքացիների հին բաժանումը ըստ տոհմական և գույքային պատկանելության: Վերափոխվում են նաև կառավարման մարմինները: Սոլոնի ստեղծած Չորսհարյուրի խորհուրդը (որտեղ գերակշռում էին երեք բարձր գույքային խմբերի ներկայացուցիչները) վերակազմավորվում է Հինգհարյուրի խորհրդի (Բուլեների խորհրդի): Այդ խորհրդում յուրաքանչյուր տաս վարչական միավորներից՝ ֆիլերից, վիճակահանությամբ ընտրվում էր 50 ներկայացուցիչ: Հինգհարյուրի խորհրդի հիմնական քաղաքական գործառնությունը դարձավ աթենական հասարակության կառավարումը՝ ժողովրդական ժողովների (Էկկլեսիաների) նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:

Հինգհարյուրի խորհուրդը միաժամանակ ուներ և՛ խորհրդարանական և՛ գործադիր լիազորություններ՝ օրենքների նախագծերի պատրաստում, արտաքին հարաբերությունների վարում, ֆինանսական հարցերի լուծում և այլն: Հետագայում ստեղծվեց նաև կառավարման բարձրագույն մարմին՝ 10 ստրատեգների խորհուրդ, որտեղ յուրաքանչյուր ֆիլեն ներկայացված էր մեկ ստրատեգով: Սկզբում խորհրդի անդամների ֆունկցիան միայն բանակի ղեկավարումն էր, բայց շուտով այն ընդլայնվում է, իսկ արքնոտների կոլեգիան մղվում է ետին պլան: Փաստորեն խորհուրդն էր ղեկավարում երկիրը:

Դեմոկրատիայի պատմության մեջ յուրահատուկ հաստատություն էր Կլիսֆենի ժամանակ ներդրված (բայց միայն 20 տարի անց կիրառված) օստրակիզմը՝ քվեարկություն կալվե կտորների (հին հունարենով՝ օստրակոն) միջոցով: Այդ կտորների վրա քաղաքացիները գրում էին այն քաղաքական գործչի անունը, ում նրանք համարում էին վտանգավոր՝ իր չափազանց մեծ քաղաքական ազդեցության կամ որևէ սխալի պատճառով: Եթե այդ քվեարկությանը մասնակցում էին առնվազն 6000 քաղաքացի, և մեծ մասը դեմ էր այդ անձին, ապա նա արտաքսվում էր Աթենքից 10 տարով (հետագայում՝ 5 տարով): Օստրակիզմը պետք է դառնար արդյունավետ միջոց՝ արիստոկրատների բռնապետական ձգտումների դեմ պայքարի համար: Հին հույն պատմագիրները հիշատակում են օստրակիզմի ենթարկված հայտնի մարդկանց, ինչպիսիք են՝ Հիպպարխոսը Արիստոկրատը, Հիպերբոլոսը, Կիմոնը և այլք:

Իհարկե, Կլիսֆենը հեղափոխական չէր, այլ՝ բարեփոխիչ, որն իր բարեփոխումները իրականացրեց ավելի վճռականորեն և հետևողականորեն, քան Սոլոնը: Կլիսֆենին հաջողվեց այն, ինչ նախորդներին չէր հաջողվել՝ փոքր տարածքում ստեղծել ազգ-քաղաք-պետություն (պոլիս), նրան նոր կյանք հաղորդել՝ խառնելով հին տոհմային կառուցվածքները, բայց չչնչացնելով դրանք: Նրա բարեփոխումներում կար քաղաքական արդարության այն նպատակահարմարությունը, որը ժամանակավորապես նույնիսկ փոխհատուցեց գույքային անհավասարությունը, միավորելով բոլոր ազատ մարդկանց մեկ հասկացության ներքո՝ «դեմոս»:

Կլիսֆենի բարեփոխումներից տասնյակ տարիներ անց, Աթենքը մտավ իր պատմության վճռորոշ փուլ՝ հունա-պարսկական պատերազմների ժամանակաշրջան: Ատտիկայի գյուղացիներն ու աթենական ժողովուրդը, որոնք հանդիսանում էին հետևակի և նավատորմի հիմքը, պայքարում էին իրենց և մյուս հույների ազատության համար: Նման ժողովուրդին հաղթանակից հետո արդեն հնարավոր չէր ուղարկել տուն առանց այն իշխանության, որը համապատասխաներ նրանց ներդրմանը հաղթանակում:

Աթենական ժողովրդավարությունը սկսեց ավելի արմատական բնույթ ստանալ, հատկապես կողմնակիցների և հակառակորդների պայքարի հետևանքով: Այդ պայքարը չդադարեց նույնիսկ պատերազմի տարիներին: Հենց այդ ժամանակաշրջանում ժողովրդին առաջնորդեց և հայտնի դարձավ որպես «դեմագոգ» (ինչը բառացի նշանակում է՝ «ժողովրդի անունից խոսող»)՝ Պերիկլեսը, որը հայտնի էր իր պայքարով արիստոկրատ Կիմոնի դեմ (Կիմոնը՝ Աթենքի ամենահարուստ մարդկանցից և զորահրամանատարներից էր): Պերիկլեսի ժա-

մանակ Աթենական ժողովրդավարությունը հասավ իր գագաթնակետին:

Հին հեղինակները նկարագրում են Պերիկլեսին որպես զգույշ և անշահախնդիր քաղաքական գործիչ: Որպեսզի չմեղադրվեր կողմնակալության մեջ՝ հայտնի աթենացիների հանդեպ, նա հրաժարվում էր Աթենքում ընդունված որոշ ավանդական միջոցներից օրինակ հրավիրյալ (զվարճախմբային) ընթերիքներից, գրում է Պլուտարքոսը և շարունակում. «Պերիկլեսը նույնպիսի պահվածք ուներ նաև ժողովրդի նկատմամբ. որպեսզի ժողովրդին չհոգնեցնի իր մշտական ներկայությանը, նա միայն ժամանակ առ ժամանակ էր երևում ժողովրդի մեջ, խոսում էր միայն կարևոր հարցերի շուրջ և ոչ միշտ էր հանդես գալիս ժողովրդական ժողովում: Մնացած հարցերով նա հանդես չէր գալիս անձամբ, այլ՝ իր ընկերների կամ իրեն հատուկ հանձնարարություն ստացած հռետորների միջոցով»: Պլուտարքոսը նաև ընդգծում է նրա հռետորական մեծ տաղանդը, որը բարձր էր գնահատվում աթենացիների կողմից: Իսկ Գերմանացի պատմիչ Յուլիս Բելոխը, ժամանակակից մոտեցումով պատկերելով Պերիկլեսի կերպարը, նրան անվանում էր «մեծ խորհրդարանական գործիչ» [2, էջ 145]:

Պերիկլեսի նախաձեռնությամբ կատարված բարեփոխումները նշանավորվում են նրանով, որ նա ձգտում էր ժողովրդավարական հաստատություններին տալ ավելի ողջախոհ և համակարգված բնույթ: Ժողովրդական ժողովը (Էքքլեսիա) ստանում է հստակ օրենսդրական լիազորություններ, Հինգհարյուրի խորհրդը (Բուլե) և մագիստրատուրան՝ գործադիր ֆունկցիաներ, դատական ժողովը (Էլիեա)՝ դատական գործառնություններ: Պերիկլեսի և նրա համախոհների հիմնական մտահոգությունը դառնում է՝ քաղաքական կյանքում բոլոր քաղաքացիների լիարժեք մասնակցության պայմանների ապահովումը: Նա ընդլայնում է վիճակահանության սկզբունքը՝ տարածելով այն նախկինում ընտրովի բազմաթիվ պաշտոնների վրա, և սահմանում է վճարում հասարակական օգտակար գործառնություններ իրականացնելու համար (ինչն էլ կրկին խոսում է նրա ողջամտության մասին). Դատավորներ՝ սկզբում 1, ապա 3 և 5 օրով, (հին հունական դրամական միավոր), Արքնոտներ՝ 4 օրով, Բուլեի անդամներ՝ 3 օրով, խորհրդի հերթապահներ՝ 1 դրահմա (կամ՝ օրը 6 օրով): Նման վճարները տարածվում էին նաև զինվորների, նավաստիների, պահակների և պետությանը ծառայություն մատուցող մյուսների վրա: Պերիկլեսը չբավարարվեց պարզապես քաղաքացիների քաղաքական մասնակցության ոլորտը ընդլայնելով, այլ ձգտեց նաև ապահովել դրա նյութական հնարավորությունները բոլորի համար, ինչպես նաև բարելավել անապահով

քաղաքացիների վիճակը՝ հոգալով ոչ միայն նրանց հացի, այլև մարդկային արժանապատվության մասին: Բացի այդ, նա ստեղծեց նաև Փետրիկոնը՝ նպատակ ունենալով կասեցնել պետական միջոցներից տոնակատարություններին, թատերական ներկայացումներին և կրոնական արարողություններին մասնակցելու համար ազնվականների (հատկապես իր մրցակից Կիմոնի) կողմից ժողովրդի կաշառման փորձերը: Նա նաև խրախուսում էր քրեռոխիսները՝ այժեմացի քաղաքացիների՝ ընտանիքներով Ատտիկայից դուրս վերաբնակեցումը, ինչը միաժամանակ ազատում էր հունական քաղաքները աղքատ խավի «ավելցուկից» և ընդլայնում Աթենքի ազդեցությունը: Բացի այդ, Պերիկլեսը նախաձեռնում է մեծածավալ հասարակական շինարարություն, ինչը նպատակ ուներ դաշնակիցներից գանձված հարկերի հաշվին աշխատանք ապահովել այն մարդկանց համար, ովքեր ցանկանում էին աշխատել:

Իհարկե, Պերիկլեսի ժամանակակիցներից շատերը միանշանակորեն չէին գնահատում այս միջոցները Օրինակ՝ Արիստոփանեսը իր կատակերգություններում հեզնում էր.

«Տես՝ դու ինքը, և ժողովուրդը, ողջ ժողովուրդը կապրեիր առանց հոգսի, եթե թույլ չտայիր, որ քեզ կապեն «ժողովրդի բարերարները»: Մարդիկհայից մինչև Պոնոքո իշխանությունը տարածեցիր, պետություններ ենթարկեցիր քեզ, բայց քեզ ոչինչ չեն տալիս՝ բացի քո վնասից, և դա է՝ կայծիկ-կայծիկ, որովհետև նրանք տալիս են քեզ այդպես՝ կայծիկ չափ, ինչպես ձեթ, որ հենց մի օրով հերիքի: Նրանց իրական նպատակը սա է՝ որ դու մնաս աղքատ, իսկ ինչու՞ սաեմ՝ որ ճանաչես քո տիրոջը, և երբ նա սուլի, դու նրա թշնամիների վրա նետվես, ինչպես շուն» [8, էջ 156]:

Պերիկլեսից հետո՝ «չափավոր ժողովրդավարության» տարիներին, սկսվում է վնաս սահմանվել ժողովրդական ժողովներին մասնակցելու համար: Արիստոտելն այս մասին գրում է. *«Սկզբում որոշեցին չսահմանել վնաս ժողովներին մասնակցելու համար, բայց երբ ժողովուրդը դադարեց մասնակցել, և պրիտանները ստիպված եղան խորամանկություններ մտածել՝ քվեարկության համար բավարար քանակ սպահովելու նպատակով, նախ Ագիդոսը գտավ միջոցներ՝ յուրաքանչյուր մասնակցին մեկ օբոլ տալու համար, նրան հաջորդեց Գերակլիտոս Կրագնեմացին, մականունով՝ Թագավոր, ով սահմանեց երկու օբոլ, իսկ հետո սկսեցին տալ երեք օբոլ» [3, էջ 69]:*

Ինչպիսի՞ն էր Աթենական խորհրդարանը Պերիկլեսի օրոք:

Ժողովրդական ժողովը՝ էքքլեսիան, Աթենական ժողովրդավարության ամենախիստ ինստիտուտներից էր: Այն հասանելի էր Աթենքի բոլոր լիիրավ քաղաքացիներին՝ սկսած 20 տարեկանից, անկախ ունեցվածքից կամ ազնվական

ծագումից: Մոլոնից ի վեր ժողովի իրավասությունների մեջ էին մտնում ամենակարևոր գործառնությունները՝ օրենսդրական (դեկրետների ու օրենքների ընդունում, որոնք նախապես պատրաստում էին «փորձագետների հանձնաժողովները»՝ սինգրաֆենները), ինչպես նաև գործադիր՝ օտարերկրյա դեսպանների ընդունում, Աթենքի ներկայացուցիչների նշանակում Ատտիկայից դուրս (նշելով առաքելության նպատակը, և նրանց օրվա ծախսերը), պատերազմի և խաղաղության հայտարարում, դաշինքների կնքում, ստրատեգոսների պաշտոնում նշանակում, երկրի պաշտպանության, բանակի կազմակերպման և այլն հարցերով նրանց զեկույցների լսում, պաշտոնատար անձանց և դիվանագիտական ներկայացուցիչների նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն:

Ժողովրդական ժողովի կողմից ընդունված ակտերը (փսեֆիսմներ) վերաբերում էին ինչպես Աթենքի և Աթենական պետության բոլոր քաղաքացիներին, այնպես էլ առանձին, հաճախ հատկապես՝ ազդեցիկ քաղաքացիներին: Հատուկ նշանակություն ուներ «գրաֆե պարանոմոն» գործընթացը՝ քաղաքացիների կողմից այս կամ այն առաջարկի անօրինականության վերաբերյալ հարցի բարձրացումը կամ գործող օրենքի չեղարկման նախաձեռնությունը: Օրենսդրական նախաձեռնությունների պատրաստման, քննարկման և հաստատման լայն շրջանակը ժողովը դարձնում էր ուղիղ դեմոկրատիայի կարևորագույն ինստիտուտ, քաղաքական որոշումների կայացման կենտրոն՝ իշխանություն իրականացնող դեմոսի կողմից:

Ժողովի հրավիրման և անցկացման գործընթացը խստորեն կանոնակարգված էր, ինչը, պաշտպանում էր այն առանձին անձանց կամայականությունից: Օրակարգը և ժողովի անցկացման ամսաթիվը որոշում էին պրիտանները՝ այդ պահին «պարեկապահակություն» իրականացնող ֆիլաների ներկայացուցիչները, նրանք էին իրականացնում ընտրությունները և հետևում կարգուկանոնի պահպանությանը: Ժողովրդական Ժողովի նիստերը տեղի էին ունենում Պնիքս բլրի վրա՝ Ակրոպոլիսի դիմաց: Նախկինում այժեմացիները հավաքվում էին ազորայում, իսկ հետագայում՝ Պերիկլեսի ժամանակ, Պնիքսում ստեղծվեց ժողովրդական ժողովների համար հարմարեցված վայր՝ մի քանի հազար մարդ տեղավորելու հնարավորությամբ, բարձրացված հարթակով բանախոսի, պրիտանների, արքոստների և գրագիրների համար: Չարմանալի է, որ ժամանակը, որը ոչնչացրել է Աթենքի բազմաթիվ հուշարձաններ, պահպանել է աշխարհում առաջին մշտապես նիստեր անցկացնող խորհրդարանը:

Երբ ժողովրդական ժողովի մասնակցության մակարդակը նվազում էր, պրիտանները քաղաք

էին ուղարկում պահակախմբեր, որոնք շուկայում և փողոցներում կարմիր ներկով ներկված պարաններով նշում էին բացակայողներին («բացակայողներին» նշման մեթոդը օգտագործվում էր դեռևս Սոլոնի ժամանակներից):

-Ինչու՞ է դատարկ Պնիքսը:

Շուկայում աղմուկ է: Աթենացիները վազվզում են:

«Պրիտանները չեն գալիս: Ժամանակին չեն գալիս:

Երբ գան, հրմշտոց կբարձրանա:

Յուրաքանչյուր ոք կշտապի առաջին տեղերը գրավել,

Բողոքը միահամուռ կվազեն...»

Ժամանակին եկողները պարանով առանձնացվում էին ուշացածներից, որոնք գրկվում էին ժողովին մասնակցելու համար նախատեսված վճարից.

«Ծիծաղեցիք մինչև ընկնելը, վկա Չևար,

Ինչպես այթենացիները հարձակվեցին պարսպի վրա» [6, էջ 218]:

Եվս մեկ կարևոր մանրամասն. մահապատժի կամ ստրկության սպառնալիքի ներքո՝ արգելվում էր օտարերկրացիների մասնակցությունը ժողովրդական ժողովին, քանզի դա դիտվում էր ոչ միայն որպես պետական գաղտնիքների դեմ ոտնձգություն, այլև՝ սրբազան ժողովրդական ինքնիշխանության խախտում:

Ժողովների ընթացակարգի մասին Արիստոտելը քիչ տեղեկություններ է հաղորդում, որովհետև նրա համար «ժողովի բռնատիրական իշխանությունը» անընդունելի էր: Սակայն Արիստոփանեսի մոտ այդպիսի տեղեկությունները շատ են: «Կանայք ժողովրդական ժողովում» կատակերգության մեջ այթենացի կանայք, լուսաբացին իրենց ամուսինների հագուստով ժողովին ներթափանցելուց առաջ, իրենց առաջնորդ Պրաքսագորայի հետ կրկնում են ընթացակարգը.

«... ինչպես պետք է ձեռքը բարձրացնենք քվեարկության ժամանակ?

Ի վերջո, մեզ միայն ոտքեր բարձրացնել են սովորեցրել»:

«Սկզբում մեր ժեստերը կվերցնենք, կամ՝

Կնստենք միմյանց մոտ խիտ շարքերում,

Որքան հնարավոր է մոտ՝ մեկը մյուսին,

Որպեսզի քվեարկության ժամանակ

Բողոքս նույն կերպ ձայն տանք...»

Քանի որ այթենական ժողովրդավարությունը նախևառաջ քաղաքացու ժողովրդավարություն էր, այսպիսի ընթացակարգային հնարքները՝ տեղերի պարագծով պարան քաշելը կամ ժամանակին եկածներին վարձատրելը, ակնհայտ առավելություն էին տալիս քաղաքաբնակներին՝ ժողովրդավարության հիմքի՝ գյուղաբնակների հաշվին: Իսկ 411 թ-ին, երբ պատրաստվում էր օլիգարխիկ հեղաշրջում, Ժողո-

վրդական ժողովը հրավիրվեց քաղաքի սահմաններից դուրս՝ քաղաքաբնակ դեմոսին վախեցնելու նպատակով:

Աթենքում ժողովրդավարության զարգացման հետ մեկտեղ մեծանում էր Ժողովրդական ժողովի նշանակությունն ու ազդեցությունը, ընդլայնվում էին նրա լիազորությունները, բայց նաև նվազում էր դրա հաճախելիությունը, ոչ միայն պետության տարածքի մեծացման, այլև՝ քաղաքացիների հետաքրքրության նվազման պատճառով: Խոսքի վարպետների գերիշխման պայմաններում ժողովը կորցնում էր գրավչությունը, իսկ քաղաքացիներն ընտրում էին ավելի օգտակար զբաղմունքներ: Ազատ քաղաքացիներից ընդամենը մի քանի հազարն էին մասնակցում Ժողովրդական ժողովներին, մինչդեռ կարևոր հարցեր լուծելու համար անհրաժեշտ էր առնվազն 6 հազար մարդ: Այդ պատճառով **ներմուծվեց մասնակցության վարձատրություն**, իսկ քվորումն ապահովվում էր ձեռնունայն մարդկանց կամ սնանկացած գյուղացիների հաշվին: Պլատոնը, ընդհակառակը, առաջարկում էր պարտադրել մասնակցություն երկրորդ և առաջին կարգի քաղաքացիներին՝ չմասնակցության համար սահմանելով տուգանք՝ տասը դրախտ: Իսկ երրորդ և չորրորդ կարգի քաղաքացիների համար մասնակցությունը ոչ պարտադիր դարձնել, բացառությամբ հատկապես կարևոր նիստերի [5, էջ 60]: Պլատոնը՝ «արիստոկրատիայի և իմացության» կողմնակիցը, փաստում է, որ իրական իշխանությունն ունեցող վերնախավի հայացքում ժողովը կարևոր մարմին էր, ինչն էլ պահանջում էր դրա արդյունավետության բարձրացման միջոցառումներ:

Առավել կարևոր էր հինգհարյուրի խորհուրդը (Բուլեների խորհուրդը)՝ Աթենքի բարձրագույն մշտապես գործող իշխանությունը, միջնորդը՝ ժողովի և պետական ապարատի միջև: Այն ուներ լայն լիազորություններ՝ Ժողովին ներկայացվող հարցերի նախնական քննարկումից և որոշումների նախագծերի (մշակումից մինչև պետական ընթացիկ գործերի կառավարում (Փինանսներ, արտաքին հարաբերություններ, նպաստների բաշխում, սրբավայրերի հսկողություն և այլն) և ժողովի որոշումների իրականացում: Օրինաստեղծ գործունեությամբ զբաղվում էին 50 բուլետներից բաղկացած միևնույն ֆիլայի պատկանող «հերթապահ» պրիտանները: Վերջիններն ընտրվում էին մեկ ֆիլայից, որն այդ ժամանակ ծառայության մեջ էր: Ժողովի նախագահողը՝ Էպիստատը, **ընտրվում էր մի օրով՝ յուրաքանչյուր անգամ նոր անձով**, և հենց նա էր նախագահում նաև ժողովրդական ժողովին: Բուլետները, որոնք կատարել էին իրենց պարտականությունները, ստանում էին վարձատրություն՝ օրական 5 որոլ, իսկ սեղանակից ծառայողի՝ ճաշի համար՝ 1 որոլ:

Բացի դրանից, հերթապահ պրիտանները ունենում էին համատեղ սեղան:

Բուլետները, հատկապես պրիտանները՝ «հերթապահ իշխանությունները», ունեին նշանակալի լիազորություններ և այդպիսով համարվում էին պետական ապարատի կարևոր բաղադրիչ: Հինգհարյուրի խորհրդի՝ որպես իշխանության ինստիտուտի յուրահատկությունն այն էր, որ դրանում ընդգրկվելու հնարավորությունը թվապես բաց էր յուրաքանչյուր լիիրավ քաղաքացու համար: Սակայն, այդ հասանելիությունը խստորեն կանոնակարգվում էր: Թեև խորհրդի կազմում յուրաքանչյուր ֆիլայից 50 ներկայացուցիչ ընտրվում էր վիճակահանությամբ, թեկնածուն պետք է լիներ առնվազն 30 տարեկան: Նրանք անցնում էին հատուկ ստուգում՝ դոկիմասիա, որը վերաբերում էր նրանց վստահելիությանը և հեղինակությանը: Միայն դրանից հետո էր թույլատրվում պաշտոնի զբաղեցումը: Ժամանակի ընթացքում դոկիմասիային սկսեցին ենթարկվել ոչ միայն ապագա բուլետներն ու արքունները, այլև ավելի ցածր պաշտոնյաները: Բուլետներն իրենց լիազորությունների ավարտից հետո պարտավոր էին զեկուցել իրենց գործունեության մասին և կարող էին ենթարկվել դատական պատասխանատվության՝ օրենքները խախտելու համար:

Աթենական ժողովրդավարության բոլոր ինստիտուտներից հինգհարյուրի խորհուրդը, ամենաժողովրդավարականն էր, քանի որ ապահովում էր բոլոր տարածքային միավորների ներկայացուցիչների հավասար մասնակցությունը քաղաքական իշխանությանը: Յուրաքանչյուր ֆիլա հերթափոխով ստանձնում էր քաղաքական պատասխանատվություն: Սակայն պրակտիկան այլ բան էր ցույց տալիս: Վիճակահանության նախապատրաստական փուլում՝ հաճախ ի հայտ էր գալիս միտում՝ բացառել ամենաքիչ ունեցվածք ունեցող քաղաքացիներին՝ պաշտոնը ծանրաբեռնված լինելու, տնից և տնտեսությունից 35 օրով կտրվելու պատրվակներով, թեպետ պրիտանները այդ օրերին ապրում և սնվում էին պետության հաշվին: Արդյունքում, բուլետի պաշտոնը գնալով մենաշնորհվում էր ունևոր խավի կողմից, որը դառնում էր ապագա օլիգարխիայի հենարանը: Արիստոտելն այս ամենը հստակ արտացոլում է «Երեսուների իշխանություն» (404–403 թթ.) աշխատությունում՝ նշելով, որ նրանք ստանձնելով պետության կառավարումը՝ հաշվի չնստեցի ոչ մի որոշման հետ:

Ժողովրդական ժողովը պետական գործերի ընթացիկ, «անկենդան» աշխատանքից ազատելու նպատակով, հինգհարյուրի խորհուրդը սահմանափակում էր ժողովի ինքնիշխանությունը. որքան ժողովրդավար ու «աղմկոտ» էր դառնում ժողովը, այնքան ավելի մեծ իրական

իշխանություն էր ձեռք բերում հինգ հարյուրի խորհուրդը՝ ժողովրդի դատին հանձնելով շատ կարևոր հարցերի վերաբերյալ արդեն պատրաստի որոշումներ: Այս միտումը հատկապես ուժեղացավ «խառնակ ժամանակներում», երբ ժողովը վերածվեց քաղաքական խմբավորումների բախման հարթակի, իսկ հինգհարյուրի խորհուրդը, ինչպես նաև արեոպագոսը, ստանձնեցին այդ բախումները մեղմելու դեր: Այնուամենայնիվ, ժողովրդավարության ծաղկման տարիներին հինգհարյուրի խորհուրդը ստանձնեց առանձնահատուկ դեր՝ որպես ժողովրդական ժողովի գործադիր մարմին, արմատական ժողովրդավարության գաղափարների տարածող և հազարավոր քաղաքացիների կառավարման «ղարոց»: Հինգհարյուրի խորհրդի նիստերին բոլոր ցանկացող քաղաքացիների մասնակցությունը, բացի հրապարակայնությունից, նաև մեծ դաստիարակչական նշանակություն ուներ:

Աթենքի քաղաքական կյանքում առավել ժողովրդավար մարմին դարձավ հելիեան՝ ժողովրդական դատարանը: Հելիեան ոչ միայն բարձրագույն դատական մարմին էր, այլև՝ կարևոր դեր ուներ օրինաստեղծ գործընթացում, ինչի շնորհիվ այն մեծ քաղաքական նշանակություն ձեռք բերեց: Հելիեան կոչված էր պահպանելու օրենքները ժողովրդավարության թշնամիների ոտնձգություններից, քննության առնելու պաշտոնյաների գործերը և քաղաքացիների բողոքները: Այն Աթենքի միակ մարմինն էր, որն իրականացնում էր սահմանադրական վերահսկողություն, ուներ ժողովրդի ժողովի օրենքների վրա վետո դնելու և դրանց վերանայման պահանջ ներկայացնելու իրավունք:

Հելիեան բաղկացած էր 6000 անդամից, որոնք ամեն տարի ընտրվում էին վիճակահանությամբ դիկաստերի (դատավորների կոլեգիաներ) շարքերից: Գործերը կոլեգիաների միջև նույնպես բաժանվում էին վիճակահանությամբ հենց դատի օրը՝ խուսափելու համար կաշառակերությունից և բարեկամների օգտին կողմնակալությունից: Հելիեան միաժամանակ հանդես էր գալիս որպես առաջին ատյանի դատարան՝ հատկապես կարևոր գործերով (օրինակ՝ պաշտոնյաների չարաշահումների), ինչպես նաև՝ որպես «վերաքննիչ» ատյան՝ այն գործերով, որոնք արդեն քննվել էին այլ դատարաններում: Օրենքների նախագծերի քննության համար գումարվում էին նոմոֆեստների ընդլայնված կոլեգիաներ՝ 1000 անդամով: Հելիեայում տեղի էր ունենում նաև դոկիմասիան (պաշտոնյաների համապատասխանության քննությունը):

Հելիեայի՝ հիմնականում ժողովրդական ծագում ունեցող կազմը (իսկ հելիաստներին վճարում էր տրվում իրենց երդվյալ դատավորի պարտականությունների համար), մեծաթիվ քա-

դաքացիների էր ներգրավում պետական գործերին: Ժամանակի ընթացքում վիճակահանությանը մասնակցում էին հիմնականում քաղաքային ստորին խավերի ներկայացուցիչները, ինչը նաև հեղինակի գործունեությանը տալիս էր հակաարխիստոկրատական ուղղվածություն: Սակայն հեղինակների (ժողովրդական դատավորների) գործունեության հակառակ կողմն էր դառնում կողմնակալությունը դատական հարցերում և հաճախ՝ անպատրաստ լինելը: Հենց այս հանգամանքն էր, որ ընդգծում էին «ժայռահեղ» ժողովրդավարության հակառակորդները՝ բացահայտելով «ամբոխի իշխանության» «թերությունները»։ բավական է հիշել Պլատոնի հայտնի քննադատական հատվածները, որտեղ նա հեզանքով է խոսում հեղինակի մասին:

Պերիկլեսի ժամանակաշրջանում պետական պաշտոնյաները կամ ընտրվում էին ժողովրդական ժողովում, կամ էլ նշանակվում վիճակահանությամբ: Վիճակահանության համար օգտագործվում էր այսպես կոչված «պարկից հանելու» մեթոդը, որը, սակայն, չպետք է հասկանալ բառացիորեն: Աթենքյան ազորայի թանգարանում ցուցադրված է հետաքրքիր «վիճակահանության մեքենա», որը գտնվել է պեղումների ժամանակ: Դա քարե սալ էր՝ անցքերով, ուր դրվում էին այն դեմերի անուններով ցուցանակները, որոնց վիճակ էր ընկել հինգհարյուրի խորհրդի, բուլեվտների կամ հերթապահ պրիտանների կազմում ընդգրկվելու համար: Վիճակահանությունը սկզբում անցկացվում էր ըստ տասը ֆիլաների. ամեն ֆիլայից ընտրվում էին բուլեվտների թեկնածուներ: Այս անունները գրված էին սալիկների վրա, որոնք դրվում էին «նեղ բերանով» կավե սափորների մեջ և բերվում ազորա: Թեկնածուների ընդհանուր թիվը գերազանցում էր 50-ը, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտության դեպքում փոխարինել բուլեվտներին: Սակայն յուրաքանչյուր ֆիլայից հենց միայն 50 սալիկ էր դրվում սալում՝ դարձնելով գործընթացը երկու աստիճանի վիճակահանություն:

Ճշգրտենք՝ ընտրվում էին բոլոր ռազմական պաշտոնյաները, ինչպես նաև այն պաշտոնյաները, ովքեր պատասխանատու էին ֆինանսների, ջրամատակարարման, նավաշինության և այլ ոլորտների համար, որոնք պահանջում էին որոշակի մասնագիտացում: Քաղաքային կառավարման գործառնություններում արդեն առկա էր մասնագիտացման միտում: Առավել մանրամասն քննարկվում էին տասը ռազմական ստրատեգների թեկնածուները: Վիճակահանությամբ նշանակվում էին նաև Աթենքի գանձապետը, հարկահավաքները (պոլետներ), պաշտոնյաների հաշվետվությունների ստուգողները (լոգիստներ), աշխարհագրի տեսուչները, տաճարների վերանորոգման պատասխանատուները և այլ

պաշտոնյաներ՝ յուրաքանչյուր ֆիլայից մեկ ներկայացուցիչ:

Ադմինիստրատիվ կառավարման հիմքում ընկած էին հետևյալ սկզբունքները՝ ընտրովի լինելը, պաշտոնավարման ժամկետի սահմանափակվածությունը, կոլեգիալ կառավարման եղանակը, ենթակայության հիերարխիայի բացակայությունը և հաշվետվողականությունը, որոնք կառավարման գործընթացը դարձնում էին խկապես ժողովրդավարական: Այս ամենը հնարավորություն էր տալիս մեծ թվով աթենացիների մասնակցել պետական կառավարմանը՝ ձեռք բերելով քաղաքական և վարչական փորձ: Աթենքյան վարչական համակարգում փորձ էր արվում ամեն ինչ կազմակերպել որոշակի կարգով ու հավասարության սկզբունքով: **Պաշտոնները տրվում էին կարճ ժամանակով միայն մեկ տարով, և ոչ մեկը չէր կարող միևնույն պաշտոնում աշխատել երկու տարի անընդմեջ:** Փորձ էր արվում պաշտոնները բաշխել այնպես, որ բոլոր սոցիալական խմբերն ունենան հավասար մասնակցություն, այսինքն՝ պաշտոնները բաժանվում էին տարբեր համայնքների (դեմերի) և տոհմերի (ֆիլաների) միջև: Յուրաքանչյուր պաշտոն ստեղծվում էր այնպես, որ այն զբաղեցնող մարդիկ լինեին տարբեր տոհմերից, և աշխատեին միասին որոշումներ ընդունելով: Սրա համար հաճախ օգտագործվում էր վիճակահանության սկզբունքը:

Սակայն, պետք է նշել, որ վիճակահանությունը կատարվում էր միայն նրանց միջև, ովքեր նախապես էին առաջարկվել թեկնածու: Այսինքն՝ պաշտոնի համար պայքարում էին նրանք, ովքեր դրանով հետաքրքրված էին՝ հաճախ ոչ միշտ ազնիվ նպատակներով: Բացի այդ, կար հատուկ ստուգման գործընթաց (դոկիմասիա), որի միջոցով ազդեցիկ քաղաքացիները կարող էին մերժել այն թեկնածուներին, ովքեր իրենց դուր չէին գալիս: Պաշտոնյաների նկատմամբ խիստ հսկողություն էր սահմանված. եթե ինչ-որ մեկին կասկածում էին չարաշահման մեջ, նրա գույքը կարող էին ժամանակավոր բռնագրավել և արգելել նրան լքել քաղաքը մինչև հարցը պարզվել: Սա վանում էր հասարակ, քաղաքական փորձ չունեցող քաղաքացիներին՝ մասնակցելու կառավարմանը:

Ամենից դժվար հասանելի պաշտոններից մեկը համարվում էր Արեոպագի անդամ դառնալը: Արեոպագը գերագույն դատարան էր, նաև վերահսկում էր կրոնական հարցերը: Նրա անդամները նշանակվում էին ցմահ: Ժողովրդավարության հաստատման շրջանում Արեոպագը կորցրեց իր քաղաքական ուժը՝ զիջելով ժողովրդական ժողովին և Հինգհարյուրի խորհրդին: Սակայն, այն պահպանեց որոշ կարևոր գործառնություններ, օրինակ՝ սպանությունների գործերով զբաղվելը, սրբավայրերի հսկողությունը և քա-

դաքացիների բարոյական պահվածքի վերահսկումը: Այս վերջին գործառույթն օգտագործում էին էլիտայի ներկայացուցիչները՝ Արեւպագը ներկայացնելու որպես նախնիների իմաստության ու բարեկարգության պահապան: Արեւպագում կարող էին ընդգրկվել միայն նրանք, որոնք ազնվական ծագում ունեին և իրենց կյանքում դրսևորել էին բարձր բարոյականություն ու խոհեմություն: Այդ պատճառով, ինչպես նշում է հույն հռետոր Իսոքրատեսը, Արեւպագը բնականաբար վեր էր կանգնած մնացած բոլոր խորհուրդներից: Արեւպագը դարձավ արիստոկրատիայի բերդը, որը պաշտպանում էր իրեն ժողովրդավարական «ծայրահեղություններից»: Հետագայում՝ մ.թ.ա. 4-րդ դարում, Արեւպագի լիազորությունները ընդլայնվեցին:

Բացի հիշյալ մարմիններից, Աթենքում գործում էին նաև այլ դատարաններ, որոնցից յուրաքանչյուրը քննում և լուծում էր որոշակի բնագավառի կոնկրետ հարցեր: Օրինակ, տասնմեկի դատարանը քննում և լուծում էր գողության, ավագակության վերաբերյալ գործերը, իսկ Էֆորների դատարանը՝ ավելի մեղմ կամ նվազ կարևորություն ունեցող հանցագործությունների վերաբերյալ գործերը: Դատավորներ կարող էին լինել 30 տարեկանից բարձր անձինք, եթե զրկված չէին քաղաքացիությունից և պարտք չէին պետությանը:

Արեւպագին հակադրվում էր տասը ստրատեգների կոլեգիան, որն ընտրվում էր ժողովրդական ժողովի միջոցով՝ բաց քվեարկությամբ: Այս պաշտոնը կարող էին զբաղեցնել միայն բարձր նյութական կարողություն ունեցող մարդիկ: Ստրատեգները, որպես կանոն, եղել են հարուստ և հայտնի քաղաքացիներ, որոնք սատարել են ժողովրդավարությանը, օրինակ՝ Պերիկլեսը: Պատերազմների ժամանակ առաջին ստրատեգոսը փաստացի դառնում էր պետության ղեկավար:

Մ.թ.ա. 4-րդ դարում աթենական ժողովրդավարությունը սկսեց անկում ապրել: Սոցիալական անհավասարությունը քանդեց քաղաքացիական համախմբվածությունը: Երկիրը թալանված էր պատերազմներից, տնտեսությունը՝ քայքայված: Սպարտայի օգնությունը ժողովրդավարության վերականգնման հարցում ավարտվեց Աթալկիդյան ամոթալի հաշտությամբ (մ.թ.ա. 387–386 թթ.): Հին հունական գաղութները հրաժարվեցին Աթենքից: Քաղաքացիների ներգրավվածությունը հասարակական կյանքում, պետական պաշտպանությունում փոխարինվեց անձնական շահերով, նյութապաշտությամբ: Դարաշրջանի հեղինակները ցավով են արձանագրում աթենացիների կորցրած ռազմական քաջությունն ու հայրենասիրությունը՝ արժանիքներ, որոնց շնորհիվ

նրանք ժամանակին համարվել են ամբողջ Հունաստանի ժողովրդավարության և անկախության պաշտպաններ: Մ.թ.ա. 355–356 թթ., երբ Մակեդոնիայի Փիլիպպոս թագավորի բանակը պատրաստվում էր ներխուժել Ատոիկա, Իսոքրատեսը իր ելույթում մեղադրում է քաղաքացիներին պետական անտարբերության մեջ՝ ասելով. «Մենք նույնիսկ գորսահանդեսների չենք մասնակցում, եթե դրա համար մեզ չեն վճարում»: Սակայն, 80-ամյա հռետորը նշում է, որ հիմնական պատճառը աղքատությունն է. նախկինում ոչ մի քաղաքացի կարիքավոր չէր, ոչ ոք ողորմություն չէր խնդրում անցորդներից, իսկ այժմ աղքատները շատ ավելի են, քան սպահովվածները: Այդպիսի մարդիկ, ասում է նա, իրավացիորեն իրավունք ունեն չմտածել հանրային գործերի մասին, եթե մտածում են միայն՝ ինչպես գոյատևել հաջորդ օրը:

Խոսելով հին աշխարհի պառլամենտարիզմի մասին, կարելի է նաև գուզահեռներ անցկացնել վերը նշվածի և Արիստոտելի կողմից ներկայացված «Աթենական հասարակարգի» (Աթենքի Սահմանադրության) միջև [4, էջ 145]: Հայտնի է, որ Արիստոտելն իր տրամադրության տակ ունեցել է առնվազն 158 «հասարակարգ», որոնցում նկարագրված են եղել թե՛ հին հունական աշխարհի քաղաք-պետությունների, թե՛ հին աշխարհի այլ պետությունների հասարակարգերը՝ սկսած Կարթագենի պետական կառուցվածքից ու վերջացած Հնդկաստանի «սահմանադրությամբ»: Սակայն այս գործերից մեզ հասել է միայն **Աթենքի սահմանադրությունը**, որը հայտնաբերվել է միայն 1890 թ. Եգիպտոսից Բրիտանական թանգարան բերված պապիրուսներում, որը 1891 թվականին հրատարակել է անգլիացի գիտնական Ֆ. Բենյոնը, իսկ վերջնականապես վերածնվել է անցյալ դարի վերջին: Ամենայն հավանականությամբ Արիստոտելը միայնակ ի վիճակի չէր լինի այդ վիթխարի գործն անելու: Թերևս այդ 158 սահմանադրություններն ուսումնասիրվել է Արիստոտելի հանձնարարությամբ ու անմիջական ղեկավարությամբ, իսկ դրանցից Աթենքինը գուցե հենց ինքն է գրել կամ խմբագրել: Համենայնդեպս, հին հեղինակներն առանց տատանվելու այս գործը վերագրում են Արիստոտելին: Արիստոտելն այս վիթխարի գործը ձեռնարկել է հատուկ նպատակով, այն է՝ որ հետագայում, դրանց վերլուծության հիմնավրա, գրի իր «**Politica**» վերնագրով հիմնարար աշխատությունը: Ինչևէ, մեզ հասած թեկուզ միայն այս «հասարակարգի» նշանակությունն անգնահատելի է թե՛ պատմական, թե՛ իրավագիտական, թե՛ իրավունքի պատմության, թե՛ բանասիրության ու այլ առումներով:

Աթենական հասարակարգն ինքնին բաժանվում է երկու մասի, **առաջին քառասուն**

գլուխը նվիրված է Աթենքի Սահմանադրության պատմությանը, որն ամփոփված է 41-րդ գլխում: **Երկրորդ** մասում Արիստոտելը մանրամասն նկարագրում է Աթենքի՝ իր օրերի հասարակարգը կամ սահմանադրությունը: Արիստոտելը հիշատակում է այթենական Սահմանադրության տասնմեկ փոփոխություն, ընդ որում, Աթենքը բնակեցնող առասպելական Իոնի հասարակարգն այս տասնմեկի մեջ չի մտնում՝ համարելով այն ելակետային, որի առաջին, թեթևակի փոփոխողը, ըստ Արիստոտելի՝ նույնպես առասպելական Թեսեսն էր: Դրանից հետո գալիս է **Դրակոնի** սահմանադրությունը, երբ կազմվեց օրենքների առաջին ժողովածուն: **Երրորդը**՝ Սոլոնի հասարակարգն էր, որից էլ սկիզբ է առնում «դեմոկրատիան»: **Չորրորդը**՝ Պիսիստրատոսի տիրանությունն էր: **Հինգերորդը**՝ Կլիսթենեսի սահմանադրությունը, որն ավելի դեմոկրատական էր, քան Սոլոնինը: **Վեցերորդը**՝ պարսկական պատերազմներից հետո հաստատված Արեոպագոսի խորհրդի իշխանությունն էր: **Յոթերորդն** Արիստիդեսի ուրվագծած սահմանադրությունն էր, որն Էփիպոտեսը կատարելագործեց՝ տապալելով Արեոպագոսի բռնակալությունը: **Ութերորդը**՝ չորս հարյուրի իշխանությունն էր, որին հետևեց **իններորդը**՝ վերականգնված դեմոկրատիան: **Տասներորդը**՝ Երեսունի տիրանությունն էր: **Տասնմեկերորդը**՝ վերջնականապես հաստատված դեմոկրատիան էր, որն արդեն տեր էր ամենայն ինչի ու ամենայն ինչ ղեկավարում էր քվեարկությամբ՝ թե՛ հավաքում, թե՛ դատարաններում, ու այս անգամ արդեն գերագույն իշխանությունը մասնատվածփոխանցված էր բոլոր տեսակի դատարաններին, **այսինքն՝ գերագույն ու կենտրոնացված իշխանության մենաշնորհի չկար:** Գերագույն

իշխանությունը, այնուամենայնիվ, **ժողովրդական հավաքին էր**, որը փաստորեն, մշտական գործող մի հանրաքվե էր և, ինչպես նշում է Արիստոտելը՝ «...երբ դեմոկրատիան քվեարկելու գործություն ունի, այս ինքն է հասարակարգի տերը» [4, էջ 206]:

Շարունակելի.....

Օգտագործված գրականության ցանկ

1. **Արշակյան Ա.** Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն: Պրակ. 2. – Երևան, 1998:
2. **Խրոպանյով Վ.** Պետության և իրավունքի տեսություն: – Երևան, 1997:
3. **Аристотель,** Афинская полития. Государственное устройство афинян. – М.: Соцэкгиз, 1936. – 198 с.
4. **Аристотель,** Афинская полития, Государственное устройство афинян. – М.: Флинта; Издание 3-е, испр. 2007. – 240 с.
5. **Аристотель.** Афинская полития. // Хрестоматия по Всеобщей истории государства и права. Т. 1. / Сост.: Батыр К.И. (Под ред.), Поликарпова Е.В., Седаков С.Ю., Филиппова Т.П. – М.: Юристь, 1996. – 391 с.
6. **Мишин А. А.** История государства и права зарубежных стран. Ч. 2. / Под ред. Жидково О. А и Кришенниковой Н. А. – М., 1991.
7. **Плутарх.** Сравнительные жизнеописания. Т. 1. – М., 1961.
8. **Черниловский.** Аристофанес. – М., 1965.

Сдана/Հանձնվել է՝ 27.05.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 03.06.2025

Принята/Ընդունվել է՝ 10.06.2025